

ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

Հ. Թ. Լ. Կ. Մ. Ե. Մ. Ե. Ե.

Տ Ա Ղ Գ Ա Ր Ն Ա Ն Ն *

Աստուած անսկիզբն և անսահման,
Անտանելի և անթարգման
Զգարունն արար հանց պատուական,
Նման դրախտին եղեմական:

Ծառք և դրախտք կանաչեցան,
Մրգապայծառ զարդարեցան,
Աղբերակունք յորդորեցան,
Ծովք ու գետերք ի գնացք եղան:

Դաշտունք ամէն ծաղկօք լցան,
Որի հոտոյն մարդիկ ցնծան,
Սիրոյարնին կու ճոխանան,
Ի վերա թեւին հային 'ւ երթան:

Կողեռ աղայքն կու խայտան,
Զխաղլու տեղանքն ի շուրջ կուգան,
Զորքոտանիք որ՝ արգելան
Ի գոմերուն զարկին լ' ելան:

Աղջկունք զվարսն կուգեղեն,
Ճիւղն, քայլն և հետ խաղան,
Ծիծառնք եկին և բուն դրին,
Սաղմոս ասեն զտունն ի լլման:

Յովանայհաւն ու լոեղնայն,
Հումրին ունին յոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, գանձ և տաղեր,
Մեղեդի և շատ շարական:

Արագիլն ու սագն ու բատն
Ու շինարօրն ուրախանան,
Բլբուլքն եկին փափակելով,
Ի վարդենիսն թափեցան:

Եռաց երկիր և կակղացաւ,
Բիւր ի բուրուց ծաղիկ բուսաւ,
Շուշան, կանանչ մուրտն և մարպն
Եւ մանուշակն ի մի դարձան:

Գնացին վարդին երկիր պագին,
Զտեղտն ունէին իւրենայն ալամ,
Նայ նարդըղի հոտն բուրեաց,
Քաճխածըն թագ պահուճեցաւ*:

Նաւնոֆարն՝ ի ջրէն ի դուրս,
Դեղին կարմիր երեւցաւ,
Համաափիւռն՝ ի մեջ ծաղկանց,
Որ մայր ասի իմաստութեան:

Եւ բժշկէ չարուկ բորտան
Եւ երկի յօր Համբարձման,
Ըզգայականք և բուսականք
Եւ ամենայն որդիկ մարդկան,

Ի մի բերան ամենեքեան,
Աւրնեն անիղ բանն էական:
Կակղացան ծառայ սասանքն,
Մէկ հետ մէկի միրգն հասան:

Թութն յառաջեաց քան զհալէն,
Կեռան յաղեղն ալ յերեման,
Մըշմիշն ի ծառն ելե դեղին,
Ի այտ խնձորնիդ կարմրացան:

Զտանձն ի մրգունքն խոտեցին,
Բայց երբ միանի կեր անսասան,
Ընդուղ ունօպն ու կաստանայն
Նուշն ու Ֆնդուղն քաղցրացան:

Նուռն էլ երաց հաղար աղոռն,
Ամբաւն ի ծառն կախեցաւ,
Մերկիւն գեղնեցաւ,
Քոխն ի կապէն թուլցաւ ընկաւ:

Զնարինջ, զթրինջ, զլիմոնըն [տեո],
Որ զարդմորդու բարքն բանան,
Այս հեծելներ որ գնաց,
Դեռ դայ խաղողն զովական:

* Զեռագրում անխորաղիր:

* Այս և հաջորդ մի քանի տներում զգացվում է որոշ տողերի պակաս և տների վերակազմում:

Զի սայ եհան զսեղ ի դրախտէն,
Յորժամ եկեր բզնայ Ագամ.
Զփակեալ դուռն դրախտին
Կրկին խաղողն եբաց մարդկան:

Ով արբէ զդայ սրբութեամբ,
Ոչ ճաշակէ զմահ յաւիտեան,
Նա ի յիս բընակեացէ
Եւ ես ի նմա անգրաւական:

Հուսկ երեկ աւուրք աշնան,
Որ է անցումն ամէն սերման,
Դաշտ ի բուսոց դատարկանան,
Ծաղկունք անցնին՝ ւայլ չերեան:

Ծառք ի պտղոյ դատարկանան,
Տերեաթափ յոստոց եղան,
Հաւերն երամ կապէն ու լան,
Թէ ալ մի լինի գարնան արժան:

Թէ շատ ուտեն, թէ շատ խմեն,
Նայ ցանկանան աւուր գարնան,
Աշուն նման է ծերութեան,
Ծերք մեռանին, անցնին, գնան:

Պարտ է մեզ սպասել անանցն,
Որ յաւիտեան է անփաղճան,
Ուր հանապաղ օրն է գարնան,
Փառք ու պատիւ է անխափան:

Ով զերախտիքս զայս չիշէ
Եւ փառս տայ աստուածութեան,
Ես զիւհաւ ասեմ նմայ,
Կամ սատանայ անբարտաւան:

Ով զայս պարզերս մեզ երես,
Դարձեալ խնդրէ [այն թէ] փոխան,
Նղբայրասէր, աղօթասէր,
Սուրբ և խոնարհ և զղջական:

Թէ զայս պահես՝ նայ աստէն քեզ,
Անդենըն քեզ ալ սեփական,
Եւ թէ անդարձ միաս մեզօք
Մատնիս հրոյն գեհնական:

Խեւ Յովանէս Թուրկօրանցի,
Լցեալ մեղօք թշուառական,
Խնդրէ ի ձէնջ սրտի մաօք,
Հոգոյն ասեղ տէր ողորմայն:

Մանարսյուն. — Այս տաղն ընդօրինակ-
ված է Հայկ. ՍՍՌ Ժողովրդագրական կից Պե-
տական Ձեռագրասան № 3498 ձեռագրում
գտնվող վարիանտից: Ձեռագիրը գրված է
1624 թվին:

Առաջին անգամ այդ տաղի մեկ թերի
և աղավաղված վարիանտը տպագրվել է
հայերեն անդրանիկ տպագիր տաղարանում,
որտեղ այս վարիանտի ունեցած 26 տան
փոխարեն կա միայն 18 տուն: Պակասող 8
տների շարքումն է նաև վերջին տունը.
պարզ է, որ առանց դրան չէր կարելի
իմանալ հեղինակի մասին. ուստի և տպա-
գրել են որպես անճայտ հեղինակի գործ:
Ճիշտ է, նախորդում է Թվուրանցու տա-
ղաշարքը, բայց չի մանում նրա մեջ:

Տպագրված այդ վարիանտի և անտիպ
(մեր ձեռագրերում առ այժմ հայտնի՝ միակ
մոտավորապես լրիվ թվացող) վարիանտի
համեմատությունից պարզվեց, որ տպագիր
վարիանտի հետևյալ տուներ

«Տէր մեր Յիսուս Քրիստոս զգինին
Առաքելոցըն վերնատան,
Ասէ առեք արբեք սիրով,
Սա է արիւն իմ փրկական» —

ամբողջովին բացակայում է ձեռագիր վա-
րիանտի մեջ: Բացի այդ, տպագիր վա-
րիանտում ոչ միայն տների հաջորդակա-
նությունն է խախտված, այլ և տողերի:
Եվ որովհետև միանգամայն զգվար է ծա-
նոթությունների միջոցով տալ համեմատա-
կան տարբերությունների իսկական պատ-
կերը, ուստի նպատակահարմար ենք գտնում
տպագրել այդ 2 վարիանտն էլ միասին, մա-
նավանդ, որ տպագիրն ավելի հին է, քան
տաղի որևէ ձեռագիր օրինակը: Որևէ ենք
ասում, որովհետև Տաշեանի «Յուդակ...»-ում
կա հիշատակում այդ տաղի մասին*, ասկայն
առանց հեղինակի անվան նշումի: Բացի
այդ, Մատենադարանի № 1990 ձեռագրում
կա հատված այդ տաղից, որը տպագիր
օրինակի էլ ավելի համառոտն է:

Հով. Թվուրանցու տաղերի շարքում՝

* Տես նաև Պատարյանի հոգվածը «Բաղմա-
վեղ»-ում 1905 թ.:

այս տաղը առանձնահատուկ նշանակու-
թյուն ունի թե՛ որպես ծաղիկների, թըռ-
չունների, մրգերի դովաստանության սաղ-
մերը կրող տաղ (Ն. Շնորհալու հանելուկ-
ներից հետո), զբված Դավիթ Սալաձորցու
և Կիրակոս (թե՛ Հովհաննես) եպիսկոպոսի
համապատասխան տաղերից առաջ, և թե
որպես մի այնպիսի տաղի, որանդ բանաս-
տեղծը պտուղները գովելիս, սկսած թթից

(վաղ դարուն) և վերջացրած խաղողով (ուշ
աշուն), վերջինիս մասին, որպես իրական
կյանքի ու աշխարհիկ վայելքների պայծառ
սիմվոլի, հակառակ կրոնի «հանդերձյալ
կյանք»-ի մասին արած քարոզների, բա-
ցականչում է.

«...Զփակեալ դուռն դրախտին
Կրկին խաղողն երաց մարդկան...»:

Տ Ա Ղ Գ Ա Ր Ն Ա Ն Ն¹

Աստուած² անըսկիդքն և անսահման,
Անտանելի և անթարքման,
Զգարուն արար հանց պատուական,
Նրման դրախտին եղեմական:

Ծառք³ և դրախտք կանաչեցան⁴,
Մրգապատուով⁵ դարդարեցան,
Աղբերակունքն⁶ որդորեցան⁷,
Ծով և գետերք ի վնաց եղան⁸:

Զորքոտանիք առդացան⁹,
Ի դոմ երամ զարկին 'ւ ելան,
Կողեռ¹⁰ տըղայքըն կու խաղառ,
Խաղլով զտեղիքն շուրջ կուգան¹¹:

Սիրոյաէնրին կու ճոխանան¹²,
Զերայ թեւին հային 'ւ երթան,
Աղչկունքն զվարսըն¹³ կու գեղեն,
Ճեմին քայլին 'ւ ի հետ ցնծան¹⁴:

Հաւերտ ամէն ուրախացան,
Ե ի իւրեաց դադարքն եկան¹⁵,
Ծիծուռնքն եկին և բուն զըրին¹⁶,
Սաղմոս ասցին զտուն ի լման¹⁷:

Ոհանահաւն ու ըռըղնան¹⁸,
Ղուժրին ունի յոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, գանձեր ու տաղ
Մեղեդիք ու շատ շարական:

Արաղիլն ու սագն ու բաթն
և շրնօրաւըն¹⁹ ուրախացան,
Պլպուլնին փափաքանաւք²⁰
Ի վարդենին թաւալեցան:

Շուշան կանաչ, մուրտ ու մարախն
Ու մանուշակըն մէկ դարձան,

Գնացին վարդին երկրպագին,
Զեղտն²¹ ունէին իւրեանց յալամ²²:

Այն նարկիլին հոտըն բուրեաց,
Պաշխաշըն թաք պանուճեցան,
Նաւաւֆարնի ջըրէն ի դուրս
Դեղին կանաչ երևեցան:

Համասփիւռն ի մէջ²³ ծաղկանց,
Որ մայր ասի իմաստութեան,
Նուաջ երկիր և կակղեցան²⁴
Բիւրք ի բիւրոց ծաղկունք բուսան:

Դաշտերտ²⁵ ամէն ծաղկօք լցան,
Որի հոտուն²⁶ մարդիք ցնծան,
Կակղացան ծառոց ոստիւքն²⁷,
Մէկ հետ մէկի մրգունք²⁸ հասան:

*) Թութն առաջեաց քան ըղհալւան,
Կեռասն աղեղ էր ի նման,
Միշմիշն ի ծառըն դեղնեցան,
Խընծորնի կարմրեցան:

*) Մըրգունքն ըղտանծըն խոտեցին,
Մինչ հաստնէ կայր անսասան,
Ընկուզն յունապն ու կաստանան,
Նուշն ու ֆընդուխըն քաղցրացան:

*) Նուռն այլ երաց դհազար աղաւն,
Ապրաւն ի ծառըն կախուեցան,
Սերկիլին դեղնեցաւ,
Դեղձն ի ծառին թուլցաւ անկաւ:

Նարինջ թուրինջ լեմոնըն գայ,
և զարդմորդուն բառքըն բանայ,
Թէ այդ հեծել տէր որ անցաւ,
Կուգայ խաղողըն գովական:

- * Զի սայ եհան զմեզ 'ի դրախտէն,
Յորժամ եկիր ըզսա Ադամ,
Փակեցաւ դուռն դրախտին
Կրկին խաղողն երաց մարդկան.
- * Տէր մեր Յիսուս Քրիստոս զգինին
Առաքելոցն վերնատան,

Ասէ՛ առէք, արբէք սիրով,
Սա է արիւն իմ փրկական:

- * Ի սգայալսն և բուսական
և աստուծոյ որդիք մարդկան,
Ամենեքեան ի մի բերան
Աւրհնեն զանեղ բանն էական:

Ծանոթ.— Այս վարիանտն արտագրված է հայերեն անդրանիկ տպագիր տաղարանից: № 1990 ձեռագրում զանգուղ տյոգ տաղի մեկ ուրիշ վարիանտի հետ կատարված համեմատութիւնից գտանք հետևյալ տարբերութիւնները:

1 Տաղ դարնան ազնիւ. 2 չիք Աստուած. 3 զաշաք. 4 կանաչացան. 5 մրգալոգատուօվ. 6 Յաղքերակունք. 7 յորդորեցան. 8 էղան. 9 ուռպեցան. 10 գողեր. 11 խաղալով դաշտերն ի շուր կուգան. 12 Սիրոյ տէրերըն կու ճոճան. 13 զվարսեր. 14 Ձէմին քայլեն և հետ երթան. 15 և իւրեանց զաղարօքն էկան. 16 եղան. 17 Սաղմոս ասեն տունն ի լման. 18 Ահայ-

նահաւն է ըսչնան. 19 չնոֆօրն. 20 բուլբուլին փափականօք. 21 դտեղն. 22 ալամ. 23 Համասփիւրն ի մէնջ. 24 կակղացան. 25 դաշտերք. 26 հատոյն 27 ոստունք. 28 մրկունք:

* Այս նշանն ունեցող բոլոր աները բացակայում են ձեռագրի մեջ: ± 24-րդ ծանոթութիւնը կրող տողից կարելի է եզրակացնել, որ բանաստեղծութեան աները խառնված և տեղափոխված են և ծաղիկների մասին եղած գովասանքները դասավորված են չբիւրք ի բիւրոց ծաղկունք բուսան» տողից առաջ:

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԱՐՏԱՄԵՏՈՅԻ

Տ Ա Ղ Վ Ա Ս Ն Ղ Ա Ր Ի Պ Ո Ւ Յ Ե Ա Ն

Վայրի հաւուկ մի բռնած ու բերած գրած զինքն ի նեղ զնդան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ:
 Սրտաբեկեալ եմ, միջակոտոր,
 Ճար չունիմ, զինչ լինեմ գերիս:

Եթե գրչուէն ու զուժրին է բերած ինձ երգասաց գուսան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե հաղար գունդգուն փետուր է բերած ինձ խալաթ կուտան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս որ չեմ յիմ երամ]:
 Եթե զշաքարն է մաղած ու բերած ինձ կերակուր կուտան,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե հաղար թախթի հուքմըն տան ու հարիւր հաղարի տէր առնեն,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]*:
 Եթե հաղար ինձ ծառայ բերեն, անհամար հեծել ձիաւոր,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե դարբաս է շինած ոսկով, դարդարած անգին մարգարտով,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե հնար ու ճարակ լինէր ինձ՝ ելնել ի նեղ զնդանիս,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Եթե լինէր, որ թռչի, բարձրանայի, տեսնի զիմ երամս,
 Զուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ]:
 Սաղաւով խառնելով ու կարկաչելով իջանեմ յերամս յորժամ,
 Ուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ խառնիմ յերամ:
 Զարթնիմ ի քնոյ գերթ տղայ, որ մաւր գրկին ի քուն
 Եւ աւրհնեմ դատուած, որ հասուց զիս յիմ երամ:
 Եկայք եղբարք և լացեք զերգողըս բանիս—գԱրտամետացիս,
 Հաղար եղուկ և աւաղ տսացեք զեղկելիս,
 Ի մէջ ամենայնի, իմ տէր, ողորմեալ, աստուած ողորմեալ,
 Յուս կենաց բաշխող, Բրիտանս, քեզ մեղայ:
 Ամաւթալից երեսաւք շրջի յաշխարհի ողորմ այս գերիս,
 Քանզի չունեմ ես փետուր նման երամիս, զինչ առնեմ գերիս:
 Իմ տէր, ողորմեալ, աստուած, ողորմեալ,
 Յոյս կենաց բաշխող Բրիտանս, քեզ մեղայ:

Ծանօթ.— Արտադրված է Մատենադարանի № 5668 (979) ձեռագրից: Կրկնվող
 տողի քառակուսի փակագծերում գտնվող մասերը ավելացված են մեր
 օգտագործած և Ղևոնդ Վ. Հովնանյանի ապագրած համեմատական թերի
 տեքստի հիման վրա:

* Տպագրում հաջորդ տողն է «Եթե հաղար ինձ մըճլիս դուզեն,

քաղցր երգով զիս զվարճացնեն

Զուրախանայր...» և այլն:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՏԻՊ ԵՐԳԵՐԻՑ

Ա.

«Հուշընդ լիքն է անդին լալով... ասում է ինքը՝ անգուգական Սայաթ-Նովան: Եվ հիբովի, որքան էլ որ դեպքերն ու ժամանակը անողորմաբար են վարվել նրա մարգարտաշատ «հուշրա»-ի հետ, դարձյալ վերջինիցս մեզ հասած լալ ու մարջանների թիվը հետզհետե ավելանում է*:

Հայկական ՄՍԽ Ժողովուստական կից Պետական Զեռագրատան (Մատենադարան) № 3751 ձեռագրում (Գ. Հախվերդյանի արխիվից) գտնվող բազմաթիվ հայ աշուղների և բանաստեղծների ստեղծագործությունների (տպագրությամբ հայտնի և անհայտ) շարքում են գտնվում նաև Սայաթ-Նովայի մի քանի երգերը, որոնցից մեկը, «Սահաթ-Նով» խորագրի տակ, մինչև հիմա դեռ տպագրված չէ:

Այդ երգը կազմված է համարակալված հինգ տներից, որոնցից առաջինը, երկրորդը և չորրորդը բաղկացած են 5-ական, իսկ երրորդն ու հինգերորդը 6-ական տողերից (ընդամենը 27 տող):

Թերթի ճակատին «Սահաթ-Նով» բառերից քիչ հետո, սուսերեն տառերով գրված է «Ашуг Банги». այդպիսի մակագրություններ կան նաև նույն ժողովածվում գտնվող այլ մի քանի թերթերի վրա: Բացի այդ, 5-րդ տան 2-րդ տողի վերջին «բահար» բառի տակ դարձյալ սուսական տառերով գրված է «венека» (թե՛ «векена») անհասկանալի բառը (հավանաբար весна):

Ընդօրինակությունը պարզ է և ընթեռնելի, սակայն պետք է նշել, որ պարունակում է մի շարք հավանական աղավաղումներ, օրինակ.

1) Հակառակ Սայաթ-Նովայի մյուս տա-

ղերում գործածված նյութ բառը «ճ» տառով գրելու ձևին («նուխկ»՝ բլրուկին քաղանկ...): այս տեղ գրված է «ջ» տառով («բունիլ է վարդի ջուղիլը»):

2) Նույնպես է վարված նաև նիտ (պարանոց) բառի նկատմամբ («Զիտունն ոսկե ամբարշտ»), այնինչ Սայաթ-Նովայի մյուս տաղերում այդ բառը գործ է ածված «ճ» տառով («...ճիտդ գցած չախնէ...», «Կամքով ու ճիտ անելով...» և այլն):

3) Ռանգ (գույն) բառը գրված է «ա»-ով («առանդ-առանդ»), այնինչ Սայաթ-Նովայի երգերում այդ բառը գուրկ է «ա»-տառի հավելումից.

(«Ռանգդ ռանգներուն ծածկում է...»

«Թահրըդ ռանգէ-ռանգ իս անում...»

«Ռանգըդ է գուլգաղի նման...» և այլն):

4) «Եաղուդ» կամ հաղութ բառի փոխարեն գրված է «Եաղուդ».

5) «Բահար» բառի փոխարեն գրված է «Բոհար».

6) «Թշերըդ» բառի փոխարեն գրված է «Թշերեդ»:

7) «Հալա» (դեռ ևս) բառի փոխարեն գրված է «հալ» (զրույթյուն), որի պատճառով էլ այդ տողում (ինչպես նաև 3-րդ, 4-րդ, 9-րդ, 22-րդ, 24-րդ, 26-րդ և 27-րդ) նկատվում է տաղաչափական կանոնների խախտում.

8) Լրիվ հասկանալի չէ 2-րդ տան առաջին տողը («Սալվի բոյ համամիցը գալիս տեղն բեղարիլ է») հավանաբար աղճատվել է «բոյ» բառը (թերևս բոյով եղած լինի, նամանավանդ որ այս տողն էլ է պատկանում այն տողերի շարքին, որոնց մեջ պակասում է մեկական վանկ):

9) Այդ բոլորից բացի՝ աղավաղման ակնբախ հանգամանք է նաև այն, որ այս բանաստեղծության մեջ, հաճախ, հենց միևնույն տողում, այնպես է ստացվում, որ իբր թե Սայաթ-Նովան (երգի այդ մեծագույն վարպետը) սիրունու հետ խոսում է

* Սրտանց ցավում ենք, որ 1939 թվին լույս տեսած Սայաթ-Նովայի բանաստեղծությունների (սուսերեն թարգմանություն) ժողովածվում այդպիսի նորանայտ երգերը (խոսքը Գ. Թարգմերդյանի հրատարակության մասին է) ոչ միայն տեղ չեն գտնվել, այլ և հիշատակման չեն արժանացել:

* Այս և հաջորդ ընդգծումները մերն են:

մերթ երկրորդ մերթ երրորդ դեմքով («Հա-
քիլ ես սաղրի քոշերը, կրունգն էրծրթէ
նալ է գցի...» և այլն): Պետք է կարծել, որ
այդ բանաստեղծութեան մեջ տեղ գտած
բոլոր «ս» և «զ» դիմորոշ հոգերը ներմու-
ծութեանն են:

Վերոհիշյալ և մի քանի այլ համանա-
կան ազավաղումները հետևանք կարող են
համարվել նախ՝ ընդօրինակողի մոտ իշխող
մեկ ուրիշ բարբառի ազդեցութեան և երկ-
րորդ՝ նույն ընդօրինակողի անուշադիր վե-
րաբերմունքի: Առաջին հանգամանքն ան-
վիճելի կարելի է համարել վերոհիշյալ
«Չուղի», «Չիտ», «առանգ» և այլ բառերի
վերաբերմամբ, իսկ երկրորդ հանգամանքն
ապացուցելու համար՝ պետք է ուշադրու-
թյուն դարձնել այն մի շարք ջնջումների
(թանաքով) և ուղղումների առկայութեան
վրա, որոնք գոյութեան ունեն այդ երգի
նշված վարիանտում:

Չնայելով այդ բոլոր փաստարկումների
համանական լինելուն, մենք գերադասեցինք
դարձյալ ապագրութեան հանձնել այդ բա-
նաստեղծութեանն այնպես, ինչպես որ նա
կա ձևապարզ, միաժամանակ կարևոր հա-
մարելով առաջին համարժեց ծանոթութեան-
ներ և անել որոշ դիտողութեաններ:

Բ.

Այն հանգամանքը, որ այդ երգը գտնվում
է մի այնպիսի ակնավոր բանասերի առ-
խիվում, ինչպիսին Գ. Հախվերդյանն է,
մեր ուշադրութեանը հրավիրեց մեկ ուրիշ
հարցի վրա: Միթե իսկապես այդ երգը
ծանոթ է եղել Գ. Հախվերդյանին և ինչ-
ինչ պատճառներով դուրս մնացել նրա հրա-
տարակած ժողովածվից, թե՛ մի շարք այլ
բանաստեղծութեանների հետ այդ բանա-
ստեղծութեանը ևս կցվել է նրա առխիվին
հետագայում: Որոշումները ցույց տվին, որ
իրոք Գ. Հախվերդյանը ծանոթ է եղել այդ
ուսանավորին: Ահա փաստը:

Սայաթ-Նովայի բանաստեղծութեաննե-
րի ժողովածվի առաջին հրատարակութեան
91-րդ էջում Գ. Հախվերդյանը բացատրե-
լով ժե (17-րդ) բանաստեղծութեան մեջ
գտնվող «նալով» բառը, գրում է.

«Նալ արբ. նշ. բայտ. Թիֆլիզու երի-
տասարդներն ու աղջկունք՝ մանաւանդ հին
ժամանակին, հազնում են եղել՝ զարդի հա-
մար, կանաչ սաղրի ֆոշեր * (կոշիկներ),
որոշ կրքնկան սակ է կամ արծթէ նալ անելն
իմանում ենք մեր աշուղներու խաղերիցն՝

«Հաքիլ է սաղրի քոշերը, կրունգն

էրծրթէ նալ է գցի».

(Սայաթ-Նովայ)...».

(Համապատասխան օրինակ է բերում նաև
Շամշի Մելքոյի մեկ երգից): Վերոհիշյալ
տողն ամբողջովին վերցված է մեր նշած
անտիպ բանաստեղծութեանից և բոլորովին
բացակայում է Սայաթ-Նովայի ապագրու-
թյան հայտնի բանաստեղծութեանների մեջ:
(Չարմանալի է, որ այս հանգամանքի վրա
Սայաթ-Նովայի գրական ժառանգութեամբ
զբաղվողներից և ոչ մեկը ուշադրութեան
չի դարձրել):

Պարզ է, որ Գ. Հախվերդյանն իր տրա-
մադրութեան տակ ունեցել է այդ երգի
կամ մեկ հասած օրինակը (որովհետև այն
գտնվում է հենց իրեն՝ Գ. Հախվերդյանի
առխիվում), կամ մի ուրիշ օրինակը (որով-
հետև Գ. Հախվերդյանի հրապարակած տողի
և մեկ հասած օրինակի համապատասխան
տողի միջև կա հինգ տառի տարբերու-
թյուն.

ապագիր. — «Հաքիլ է ** սաղրի քոշերը,
կրունգն էրծրթէ նալ է գցի»:

անխիլ. — «Հաքիլ էՍ սաղրի քոշերը,
կրունգն էրծրթէ նալ է գցի»:

Թերևս հնարավոր լինի այդ տարբերու-
թյունը բացատրել նաև հրատարակողի կա-
տարած խմբադրութեամբ:

Իսկ թե ինչու այդ երգը, ինչպես նաև
այդ ժողովածվում գտնվող Սայաթ-Նովայի
երգերից մեկ ուրիշը, *** դուրս է մնացել Գ.
Հախվերդյանի կատարած հրատարակու-
թյունից կամ տեղ չի գտել հետագայում
նրա գոտեր՝ Մանե Հախվերդյանի հրատա-
րակած «Հայ Աշուղներ»-ում, առ այժմ
մեկ համար մնում է անբացատրելի:

* Ընդգծումը Գ. Հախվերդյանինն է:

** «ս» հոգի բացակայութեանը հաստատում է
այդ առթիվ վերևում արտահայտած մեր կարծիքը:

*** որը ապագրված է հետագայում:

Գ.

Ինչպես Սալաթ-Նովայի մյուս բանաստեղծությունների իշխող մեծամասնությունը, նույնպես և այս բանաստեղծության թեման սերն է: Գեղարվեստական պատկերների և համեմատությունների տեսակետից այնքան ակնառու նորություններ չկան այստեղ, ուշագրավ են այս երգում ազգագրական կենցաղային տեղեկությունները:

Այստեղ երգիչը ոչ միայն յուրահատուկ դրչով նկարագրում է իր սիրուհու «սալի բոյը», «քաղցր իխտիլաթ»-ն ու «սալադ»-ը, այլ և նրա հագուստն ու զարդարանքը, սկսած «զարու չարդաթ»-ից և վերջացրած «սաղրի քոշեր»-ի «էրծըթէ նալ»-երով:

1. Եթե նրա մյուս բոլոր երգերում սիրուհու գլխի զարդարանքի մասին իմանում էինք, որ «Զարով, արբեշումով հուսած մազեր» ունի և «զաստամադի թեղի մէջըն մե շաղա մարջան է քաշած...», ապա չէինք իմանում, թե նա էլ ինչ էր գործածում գլխի համար: Մի այլ տեղ երգիչն ասում է՝ «Աւալ քու տեսնողըն մեռնի՝ քեզ գլխաբաց չտեսնէ»: Ուրեմն ծածկոց էր հարկավոր և ահա այս երգում նա նկարագրում է արդեն նաև այդ ծածկոցը.

«Ծածկիլ է զարու չարդաթը, գլխին
բիրման շալ է գցի»:

2. Եթե Սալաթ-Նովայի մյուս երգերում սիրուհու պարանոցի համար ոչ մի զարդարանք նշված չէ, ապա այս երգը գալիս է լրացնելու նաև այդ բացը.

«Զիտումն ոսկէ ամբարշա»...
Ճիշտ է, երգերից մեկում ասում է.
«Դոշիդ պխտի լալ ու ալմաս
Շարերո՛վ,
Շարերո՛վ»...

Բայց չպիտի մոռանալ, որ այդ օձիքի համար է ասում: Այդ առթիվ ևս նորահայտ երգում չի մոռացել հիշատակել

«Եախեն մարդարիա շարիլ է»:

3. Եթե սիրուհու իրանի համար երգիչը հիշատակում է.

«Մեշկիդ ունիս ոսկէ քամար»...

կամ՝

«Բարակ մեշկիդ թիրման շալըն նը-
ման է ոսկէ քամարին»...

կամ՝

«Հալա չեն գործի թիրմանումըն շալ
քիդի լալիդ»...

Ապա այստեղ նկարագրում է «քամար»-ն իր մանրամասնություններով.

«Զեռն գիւլիս գոտկին մեկնած, միւս
քամար սաղ է անում»

ապա՝

«Գոսկի տուր մինչև եակին (?) ետդդ,
եաման, լալ է գցի»...

4. Եթե մյուս երգերում սիրուհու հագուստի մասին աշուղը գործածել է ալ, աալաս, դար, դարբար, խաս ալ, դումաշ, դուշու, դարբար, զարդարբար, դուքս, ալ դումաշ, բենեդ ծիրանի և դալամբար բառերը* — ապա այստեղ կոնկրետ կերպով նշում է հագուստի անունը՝ ավելացնելով երկու նոր բառեր, որոնցով ցույց է տալիս կտորի և հագուստի տեսակը

«Հաքիլ է զալի մինքանեն»...

... Եթե Սալաթ-Նովայի մյուս բոլոր երգերում կանաչի ոտնամանների մասին տեղեկանում ենք միայն

«Գեղինըն զարթարվեցաւ իմ ետրի ոս-
կէ նալով»... տողից և այն էլ միայն ոսկե նալից, ապա այս բանաստեղծության մեջ մենք տեսնում ենք այդ «նալ»-ը կրող ոտնամանն իր որոշ նկարագրությամբ և ա-
նունով.

«Հաքիլ էս սաղրի քոշերը, կրունգն
էրծըթէ նալ է գցի,
Ոսկեթելով բաթեն կարած առանդ-
առանդ խալ է գցի»...

Ա. ՄՆԱՅԱՆԱՆՅԱՆ

* Որոնք ցույց են տալիս, ինչպես արդեն նշել է պրոֆ. Մ. Աբեղյանը, կտորեղենի տեսակը և անու-
նը, բայց «դուքս»-ից, որն էլ միայն ընդհանուր ա-
նուն լինելով ոչինչ չի ավելացնում մյուսների վրա:

Ս Ա Յ Ե Ա Թ Ն Ո Վ

- 1) Բլբուլի պէս ձայն է տալի, ինչ քաղցր աւաղ է անում,
Մօղ է արի դուշ-դարաւաշ, կշտումը պարվաղ է անում,
Բոնիլ է վարդի ջուղկը, գիւլին փիանդաղ է անում,
Վաղաւաղաւ միտն է գցի, իրօն-իրան հաղ է անում,
Ես ինչ անեմ, իմ սիրելին ինձ իդ գիւլ դաւաղ է անում:
- 2) Սալվի բոյ համամիցը գալիս տեղն բեղարի է,
Ունքերն դալամով քաշած, աչկերն խելքս տարիլ է,
Զիտումն ոսկէ ամբարշա, հախեն մարգարիտ շարիլ է,
Միւրաւար գուլարաթինով դար դալամքարն կարիլ է,
Զեռն գիմխա գոտկին մեկնած, մինա քեամար սաղ է անում:
- 3) Հաքիլ ես սաղրի քոշերը, կրունգն էրծըթէ նալ է գցի,
Ոսկէթելով բալթէն կարած, առանդ-առանդ խալ է գցի,
Գոտկի տուտը մինչև հակեն հաղոդ, համան, լալ է գցի,
Ծածկիլ է դարլու շարղաթը, գլխին քիրման շալ է գցի,
Խնդրում իմ գնանք օթախը, ինձ հիդ դալմաղալ է գցի,
Կոսէ հալ ջէր վախտը չէ, ուշացնում է, նաղ է անում:
- 4) Թշերէդ գիւլգաղ լալի պէս, պրոշդ լուլափարա է,
Խօսեցնում իմ ջուղար չիս տալ, էն կողմէն սիրտս հարա է,
Հաքիլ է դարլի մինթանեն, հանիլ է հաշիլ խարա է,
Կրները շիմշաղ է քաշած, բոյին մէ քոշք ու սարայ է,
Ես ինչ անեմ, որ սպանում է, ջալլաղի պէս ջաղ է անում:
- 5) Քաղցր իխտիլաթ ունիս, Մարլու դանդ ու շաքար է,
Շողկդ (շողվդ) ինձի նորոգիլ է, նոր բացուած գիւլլու բոհար է,
Ծոցիդ միջում մի ջուխտ շամամ անգին ջալալիլ, ալմաղտ քար է,
Ով չէ առի անուշ հուտդ, աշխարքումս ինչ կու ճառէ,
Հարցրին Սայաթ-Նովին, էսպէս հարեն բանդիւար է,
Բանդ ու փարւան իմ էլի, նըստած է, Շիրաղ է անում:

Ծանոթութիւն.— Կից ներկայացվող բա-
ռարանը կազմելու համար գիմել ենք մի
շարք բառարանների օգնութեամբ, նամա-
նալանդ, որ այս բանաստեղծութեան մեջ
Սայաթ-Նովան գործածել է մի շարք այն-
պիսի բառեր, որոնք բացակայում են նրա

տպագրված մյուս երգերի մեջ (հակա, գիւլ-
գաւաղ, ամբարշա, գիմխա, միւրվար, հա-
շիլ-խարա և այլն): Սյս տեսակետից ես
պետք է նշել տպագրութեան հանձնվող այս
նոր բանաստեղծութեան առանձին նշանա-
կութիւնը:

Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

- Աւագ—աւազ, ձայն, երգ, հնչյուն (նաև հռչակ, համբավ, փոխարեն), միալար ձայն:
- Աօղ է արի—շուրջն է հալաքել, խմբել է շուրջը:
- Ղուե—թռչուն:
- Ղառաւաշ—սպասավոր, ծառա, սղախին:
- Կեսումը—մոտը, շուրջը, կողքին:
- Պարվազ (փարվազ)—փարվել, շուրջը պըտույտ գալ (փերվեզ—ժապավեն՝ կանայքի հագուստի եղերքին կարվող) նաև՝ սփռվել, ուրախացնել:
- Ջուղկը—ճյուղը:
- Գիւլ—վարդ (նաև ծաղիկ):
- Փխանդազ—պատվավոր հյուրերի և իշխանավորների ոտքի տակ փափոց ուղեգորգ:
- Վաղտ-վաղտ—երբեմն-երբեմն:
- Հազ է անում—հաճում է, փափագում է, սիրով է կամենում:
- Գիւլ գաւազ—կատակ, ծաղրի տոնել (նաև խայտառակել):
- Սարկի—հոճի:
- Բոյ—հասակ:
- Համամ—բազնիս:
- Բեզարիլ—հոգնել:
- Ձիտումն—պարանոցին (նիտ—պարանոց, ջիտ—ուղիղ, իսկական, ճշմարիտ):
- Եախա—օձիք:
- Ամբարշա—պարանոցի զարդ:
- Միւրեք—«Թանթրավենի» sureaü, mürver, վարդենու տեսակ մի տունկ, տալիս է սպիտակ ծաղիկներ (օգտագ. դեղի համար):
- Միւրաքիդ—մարգարիտ:
- Գուլաքաքին—ոսկեթել:
- Ջար—ոսկի (գարգար—ոսկերիչ):
- Ղալամբար—գունդգուն ծաղկանկարներ ունեցող կտորեղեն:
- Գիւխա?—շորից կամ թանկագին մետաղից պատրաստված լայն գոտի:
- Մինա—սևադ, կիտվածք, արծնապակի (նաև՝ բարձր, կապույտ երկինք):
- Քամար—գոտի:
- Սաղրի բռներ—կանաչ սեկից կարված ունամաններ:
- Նալ—պայտ:
- Բավթա—ժապավեն:
- Առանգ-առանգ—գունդգուն, երկնեբանդ:
- Տուտը—ծայրը:
- Եակեն?—գոտի կախված ծայրի ազնիվ մետաղյա մասը?
- Եաղուր—հակինթ [եախօր, եաղօր, եախօտ—նշանակում է քե, կամ քե շողկապը]:
- Եաման—հառազայթ, փայլ:
- Լալ—գոհար:
- Ջարլու—ոսկեղեն:
- Ջարդաք—մետաքսյա կարմիր ծածկոց:
- Օքախ—սենյակ:
- Ղալմաղալ—սկանդալ, աղաղակ, աղմուկ:
- [Հալ—գրություն]:
- Հալա—դեռ ես:
- Ջեր—դեռ (նաև՝ անգամ):
- Գիւլգազ—ծիրանագուն, խոսա ալ:
- Լուլա-փարա—շաքարեղենի, քաղցրեղենի տեսակներ (նաև՝ լուլա—ծորակ, փարա—մաս, լույս, հառազայթ):
- Ջուղաք—պատասխան:
- Եարա—վերք:
- Մինքանա—կանացի երկար հագուստի մի տեսակը:
- Եաթիլ խարա—կանաչ կերպասի մի տեսակը (նաև՝ կանաչ-սև):
- Կրները—ձեռները:
- Շիւշատ—տոսախ, մշտադալար ծառ, որ տալիս է խիտ և ծանր (ջրում սուզվող) փայտ:
- Քուբ—բուրդ, դղեակ, աշտարակ:
- Սարալ—պալատ, տպարանք:
- Ջալլատ—դահլճ:
- Ջազ (ջազա)—պատիժ, տանջանք, տուգանք:
- Իստիլաք—զրույց:
- Մարր—եղիպտոս:
- Ղանգ—շաքար:
- Շողկի (շողվի)—փայլի, լույսի, շողքի:
- Բոհար (բահար)—գարուն:
- Բանդիլար—կապված, սիրահարված:
- Բանդիլան—անտեր, անճար:
- Բանդ—կապ:
- Փարվան (ա)—թիթեռ (նաև առաջնորդ, դուշակ):

ԱՌԱԿ: ԱՌԻԻՄ ԵՒ ԷՇ

Առիւծն աքլարից խիստ շատ կու վախի,
 Նորա ձէնէմէն չուշտ կու սլքվի:
 Էշն էլ, խօմ գիտէք, ինչ խասեաթ ունի
 Ու ինչպէս ախմախ աղքատ է խելքի:
 Դէ ահանջ դրեք էս կարճ առակի:
 Ոչ ով խեղճ էշին մասխարայ չանի:

Մեկ օր առիւծը խիստ շատ սովեցաւ,
 Շատ դէս-դէն ընկաւ, շատ չալիշ էկաւ,
 Անօթ[ի] փորով մէկ մեծ գեղ մտաւ,
 Մէկ չազ շուն ճանկեց, սրբել սկսաւ:
 Բառաստ աքլորը կտրին վեր էլաւ,
 Կիզիլիօ կանչեց, ճաշն հարամ արաւ:

Առիւծն աքլարի երբ ձենը լսեց,
 Պոչը հաւաքեց, գեղէն դու[րս] փախեց,
 Դիժ էշը տեսաւ, ահանջնին սրեց,
 Անուշ իր ձենով աղաթին դաեց,
 Առիւծի հաքէն երիշով վազեց,
 Դօջաղ աղի պէս վախցնել ուզեց:

Առիւծն որ աքլարն հեռացած տեսեց,
 Զիգականջ իշին իր թաթով դարկեց,
 Վեր կոխեց, ջարդեց, պատանը ձևեց,
 —Այանխելք հայվան,—աղաջին ասեց.—
 Զալում առիւծը քեզմէն չի վախեց,
 Աքլարի ձէնէն զգուեց ու փախեց:—

Եթէ խելք ունիս՝ դէ շուտ իմացիր,
 Ո՞վ է առիւծը, ով իշի ընկերը:

Ծանոթություն. — Այս առակը, չնչին տար-
 րերություններով, առաջին անգամ տպա-
 գրւած է Միաւսարյանի «Քնար Հայկա-
 կան»-ում (տես էջ 433—434), ուր ծանո-
 թության մեջ ասված է. «Նիկողոս (Նիկո-
 դայոս) Տէր Շմաւոնեանցի՝ Յարութիւն Ա-
 լամդարեանի աշակերտի հեղինակութիւն կը
 համարուի: Ոմանք էլ Յարութիւն Վ. կը
 կարծեն»:

Վերջերս Մատենադարանի № 6588 ձե-
 առքում («Պատճէնք ոմանց թղթոց ար-
 տագրեալ ձեռամբ տիրացու Յովն. Տէր Յով-
 հաննիսեանց. հրամանաւ Աղայ Գալուստ
 Շիրմազանեանց 1850 թի ի 15-ն դեկտեմ-
 բերի») տեղափորված Աղբ. Աղամի, Շամչի
 Մելքոնի, Նաղաշ Հովնաթանի. Գ. Նովայի,
 Գրիգոր Օշականցու, Հարութիւն Ալամդար-
 յանցի և այլոց մի շարք տաղերի թվում
 մենք հանդիպեցինք վերոհիշյալ առակին և
 նպատակահարմար գտանք վերահրատարա-
 կել այն, որովհետև.

1) Այդ առակը գտնվելով Հարություն
 Ալամդարյանին պատկանող տաղաշարքի
 մեջ, հիմք է տալիս այլևս չկասկածելու,
 որ դա Հ. Ալամդարյանի գրչին է պատ-
 կանում, մանավանդ, որ այդ «տաղա-
 րան»-ում ոչինչ չկա արտագրված Ն.
 Շմաւոնեանին պատկանող գործերից:

2) Այդ տաղի անմիջական շարունակու-
 թյուն են կազմում պատասխանի երեք ջըն-
 ջված, սակայն ընթեռնելի հետևյալ տողերը.

«Առիւծը Ներսէս եպիսկոպոսն է,
 Էշն Յովհաննէս կաթողիկոսն է,
 Աքլօրն գրած պատմիչն»:

Այս տողերը հնարավորություն են ըն-
 ձեռում մեզ գիտենալու՝ թէ մեծ դեմ էր
 ուղղված այդ առակը և ինչ հարաբերու-
 թյան մեջ էին միմյանց հետ վերոհիշյալ
 անձնավորությունները:

Ա. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

* «Դրած պատմիչն» գործվածքը թերևս «Դրա՞ֆ
 Պատկերիչը» լինի, որը աղավաղված է կամ բնագրից
 բնագործակելիս՝ զբջի կողմից, կամ ջնջված լինելու
 հետևանքով: